ՎՈԼՈԿՈԼԱՄՍԿԻ ԵՎ ՅՈՒՐԵՎՍԿԻ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՊԻՏԻՐԻՄ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻՆ

Ձերդ Սրբազանություն,

Սույն ամսվա սկզբին Մենք հոգեկան ուրախությամբ լուր ստացանք Ձեզ Վոլոկոլամսկի և Յուրևսկի Միտրոպոլիտի աստիճանի բարձրացնելու մասին:

Վերջերս լինելով Մոսկվայում, որպես «Հանուն միջուկազերծ աշխարհի» միջազգային համաժողովի մասնակից, Մենք հանդիպեցինք Ձեզ մի ակնթարթ, սակայն Ձեր արտակարգ և հասկանալի զբաղվածությունը հնարավորություն չտվեց սրտագին շնորհավորելու Ձեզ Ձեր կյանքի այդ նոր, շնորհատու էջի համար:

Ընդունեք, Սրբազան Տեր, այժմ Մեր անկեղծ շնորհավորանքները Ձեր կյանքի նշանակալից դեպքի համար:

Մենք բարձր ենք գնահատում Ձեզ, որպես Ռուս Պրավոսլավ Եկեղեցու առավել գիտուն, առավել հոգեշնորհ բարձրաստիճան հոգևորականներից մեկը, որի հոգևոր և գիտական հեղինակությունը հանրաճանաչ է նաև մեր երկրից դուրս: Մենք բարձր ենք գնահատում նաև Ձեր անխոնջ գործունեությունը Մոսկովյան Պատրիարքարանի հրատարակչական բաժնի նախագահի պաշտոնում, որը Դուք վարում եք Ձեզ հատուկ իմաստությամբ և խանդավառ աշխատանքով:

Օգտվելով առիթից, ցանկանում ենք հայտնել, որ Մենք ջերմ սրտով նշում ենք Ձեր սիրալիր ուշադրությունը մեր Եկեղեցու և Մեր անձի նկատմամբ, որ Դուք բարեհաճում եք ցույց տալ յուրաքանչյուր առիթով:

Ամբողջ հոգով ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և երկար անամպ տարիներ՝ Ս. Եկեղեցուն Ձեր ծառայության համար:

Սիրով ի Տեր՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
24 փետրվար 1987 թ.